

ՏԱՄՆ ԵՒ ԵՌՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Յարեկան զինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում զրովում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Կովկասեան ցուցա-
հանդէս. Նամակ Գորպատից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջխառն-նախագահ Տի-
րարի ճառը. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ.—
ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.— ԲՈՐՍՍ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գարգառման.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ինչպէս ասեցինք մեր անցեալ յօդուածում,
մենք բաժանում ենք մեր Կովկասեան ցուցահան-
դէսը հինգ որոշ մասերի:

Հանդէս զրոված առարկաների առաջին խումբը,
մեր երկրի հոսմ ներկերն ու բնական բերքերը,
դժուար է ենթարկել որ և է ընտելացում իրեն,
քանի որ մեր երկրի հարստութիւնը անվիճելի է:
Եւ ճշմարիտ, շատ քիչ երկիր կը լինի աշխարհիս
երեսին, որը կովկասի և Անդրկովկասի պէս հա-
րուստ լինի բնական բերքերով ու հում ներկերով:
Արցաշէ միակ հանդիմանութիւն, որ կարելի է ա-
նկ ներկայ ցուցահանդէսի կարգադրիչներին այն
է, որ նրանք չեն ջանացել ձեռք բերել մեր եր-
կրի բոլոր հարստութիւնները նմուշները Բայց
դարձեալ որքան հարստութիւններ կան ներկայ
ցուցահանդէսում:

Հանքային բաժինը ներկայացրել է Ղարաբաղի
պղինձը, խմբէթի քարածուխը, Կարդուանի և
Կուրայի թափանցիկ, բերանդանման աղը, Բազուի
և ուրիշ տեղերի նաւթը, Երևանի օքսիդիան
գեղեցիկ քարը, և այլն և այլն: Երկրորդ
ժական բաժինը ներկայացրել է բամբակը,
բրինձը, ցորենը, սիմիդը և այլն: Օտարազգի
այցելողը կը գարմանայ, իմանալով որ Երևանի
նահանգի Արդականը գեղեցիկ ուղարկված հրա-
շալի, դեղին, խոշոր հատիկաւոր ցորենը՝ բուս-
նում է ծովի մակերևոյթից 4000 ոտնաչափ բար-
ձրութեան վրայ Արցախի լեռնաշղթան և զինեղործա-
կան բաժինները հիւսնում են ամենքին Երևանի
նահանգի հիւսնում միջերթով, անմասն դեղձերով ու
խաղողով, Երևանի, Կախէթի և Գանձակի զինի-
ներով, շերամապահական բաժինը՝ մեր երկրի դա-
նադան տեղերի շերամի բոժոժներով, և այլն...
Անտառային բաժինը մանաւանդ Բորժոմի կա-

լուածքը, ներկայացրել է մեզ մեր երկրի անտառա-
յին տեսակները ահազին հարստութիւնը, և այլն:
Անտառային է, այո, որ մեր երկրի շատ հա-
րուստ է բնական բերքերով, որ մեր երկրի,
այդ կողմից, Աստուծոց օրհնված երկրի է, բայց
այդ բոլորը մեզ վաղուց յայտնի է, մեզ համար
օչինչ նոր և ուսանելի բան չէ ներկայացնում...
Հարցը դրա մէջ չէ թէ որքան հարուստ է երկի-
րը, բայց թէ որքան և որ չափով գիտենք մենք
օգտվել այդ բոլոր անթիւ անհամար հարստու-
թիւններէ: Մեզ համար, ասում ենք, դա այն-
քան ուսանելի չէ, որքան ուսանելի կարող է լի-
նել ցուցահանդէսն այցելող օտարազգիների հա-
մար: Բնութիւնից մեզ տուած հարստութիւնները
նոյնն են մնում, ինչ որ կային դարերից ի վեր,
մենք չենք բարեբաղում, չենք լաւացնում, չենք
կատարելագործում այդ բերքերը:

Չուզեմք անցաւոր բնական այդ հարստութիւն-
ների հետ, մեզ շատ քիչ կարող են հետաքրքրել
և մեր երկրի այն բուն տեղական արհեստները,
որոնք դարերից ի վեր անշարժ են մնացել, մա-
զի չափ առաջադիմութիւն չեն արել... Ինչքան
ինքնուրոյն ու նուրբ լինէին զանազան տեղական
արհեստները արդիւնքները, ինչպէս շալերն ու
գորգերը, փայտագործութիւնն ու ոսկերչութիւնը,
—բայց այդ հնգարեան, բուն կովկասեան ար-
հեստները, ինչպէս ասեցինք, դարերից ի վեր մա-
զի չափ առաջադիմութիւն չեն արել, մազի չափ
չեն կատարելագործվել և այդ պատճառով, բուն
տեղական հնգարեան արհեստները դատապարտված
են միմիայն մուգեղանքի, թանգարանների դար-
գարանքներ լինելու և անկարող են լինում մրցել
մարդկութեան ժամանակակից առաջադիմ ար-
հեստների հետ: Մեզ կոմիտասեան, բուն
ինքնուրոյն արհեստները արդիւնքները նոյն
վեր են խաղում, ինչ որ եւրոպական միջազգա-
յին ցուցահանդէսներում խաղում են զանազան
պարսկական, հնդկական, եսապոսական, արաբա-
կան կամ չինական արհեստները: Մինչդեռ եւրո-
պական արհեստները օրից օր առաջադիմում,
կատարելագործվում են, սրանք միակերպ, առ է-
րէ օտար են մնում իրանց սուրբ անշարժու-
թեան, իրանց անշարժ առանցութեան մէջ: Նոյն
ինքնուրոյնութիւնը, նոյն նրբութիւնը, —բայց
զուրկ առաջադիմութեան որ և է նշույլ... Եւ
եթէ հարկը տարուց յետոյ էլ Կովկասեան կամ
միջազգային ցուցահանդէս կը լինի, —պարտկիւ,

հայը, հնդկացին, եսապոսացին, կամ չինացին՝ կը
ներկայացնեն ցուցահանդէսին ճիշդ նոյն տեսակ
փայտագործութիւն, ճիշդ նոյն տեսակ գորգեր ու
կարպետներ, ճիշդ նոյն տեսակ ոսկերչական ար-
դիւնքներ, ինչ որ ներկայացրել են հարկւր օտա-
րուց առաջ:

Եւ այդ տեսակ արդիւնքներն են, մեծ մասամբ,
որոնք մեր ցուցահանդէսում կրում են տնայնա-
գործութեան փառաւոր անունը: Այդ վերջին բա-
ժինն մենք կը վերադառնանք հետեւեալ անգամ,
իսկ այժմ կ'ասենք որ մեզ անհամեմատ աւելի են
հետաքրքրում մեր ցուցահանդէսի այն բաժիննե-
րը, որտեղ մարդկային աշխատանքի, մարդկային
արդիւնքների ողորդ որ և է առաջադիմութիւն՝
նշմարվում. մեզ աւելի են հետաքրքրում նախ-
մեր տեղական գործարանների և արհեստանոցնե-
րի արդիւնքները, մեր երկու սեւի արհեստաւո-
րաց դպրոցների աշակերտների արդիւնքները և
ապա մեր երկրում զետեղված օտարազգի գործա-
րանատէրերի արդիւնքները: Ինչպէս ասեցինք, և օտար
երկրներից բերված այլ և այլ մեքենաներն ու
գործիքները, որոնք ներկայանում են մեզ որպէս
անտեսական և արդիւնքներական առաջադիմու-
թեան գործարար գործիչներ:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԴՈՐԱՍՏԻՑ

Սկսածներ 1-ին

Արդէն տաս տարուց աւելի է, ինչ Դորաս-
տում ամեն տարի, առանց ընդհատման, տեղի է
ունենում գիւղատնտեսական ցուցահանդէս: Յու-
ցահանդէսի ժամանակը սովորաբար օգոստոսի
մեծնուն է, եւս տարին իր չորանը կատարելով
արդիւնքները գաղափարելով է հասնում, իր բոլոր
գեղեցիկութիւններով, իր առաւատ արդիւնքով լը-
նելով գիւղացու սիրտը անուն բերելներով:

Յուցահանդէսին մասնակցում է համարեա մի-
այն Դորաստի ժողովի գաւառը, թէ և պատա-
հում է, որ Բիգայից կամ Բելիկից ևս գտնվում են
մասնակցողներ, այն էլ մեքենաների բաժնում:

Այդ նպատակի համար քաղաքի կենտրոնից
հեռու չլինված է փայտեայ հասարակ շինութիւն,
բայց նա ունի ցուցահանդէսին համապատասխան
բոլոր յարմարութիւնները: Յուցահանդէսը կաղ-
մում են հետեւեալ մասերը: Բնութեան բերքը, հա-
ցահատիկներ, կանաչեղէն, պտուղներ: Յետոյ գա-

նա, խեղճ եւս Դու ինձ այն ասան, հօ աչքը ու-
րիշի հաւերին չէ ընկնում:

— Եւ, խնամի, միտքս, դարդս չը հասկացար:
— Հասկացայ, հասկացայ, ամեն օր փաւ ու-
տել լաւ չէ. բաս քո ախորժակիդ ինչ ճար ա-
նենք:

— Դժուարը այդ է, որ ճար չեմ գտնում: Եւ
բայր, շատ թանկ է նստում, հաւատացիր. դու
դեռ չես ընկել, չես տեսել, բայց կը տեսնես:
Պատկերաց յետոյ ասեցի՝ սա է որ դուք եմ
Բայց հիմա չէ...

— Դէ մի պարզեմ ասա, տեսնեմ, դուք եւս մի
ճար անեմ, դու դեռ չես ճանաչում խնամուդ.
Խրան-Փուրան իմ ձեռքիս մի թիւքայ էր, ուղիւ,
այսպէս կուլ կը տայի, ասա:

— Եւ, խնամի, որ կարողանաս ճար անել, էլ
գարդս չի լինի: Ինձ վրա չէ տաքանում: Ամեն
օր մի և նոյնն է...

— Քեզանից է, մեռած, թաղված: Դու քառա-
սուն տարվայ գայլ ևս, տատմները թաղված.
Եւ զանում ինչ է մնացել որ քեզ վրա տաքանայ:
Դու հօ գիւնես, որ ես քեզ լաւ եմ ճանաչում,
լաւ...

— Ճանաչում ես, ճշմարիտ է. բաս էլ ինչու
եմ բերել, ինչու եմ հաց տալիս, նա ինքը պիտի
ինձ չարժէ, տաքացնէ, նորից ջահելացնէ:

— Այդ ճշմարիտ է, ինչու ես, Վարդապար, ի-
րաւունք ունես: Բայց ասիւ քեզանում էլ սիրտ
չէ մնացել, սիրտը ժանդով ծածկվել է, կերվել է:

Իսկ է դեղձուհու ձեռքի արտադրութիւնը. բըր-
թեայ և կանեփեայ գործուածքներ, ապա բա-
ւական ընդարձակ տեղ բռնում են կաթնա տն-
տեսութեան վերաբերեալ գործիքները և այդ
ճիւղը այստեղի գիւղատնտեսութեան մէջ մեծ
տեղ բռնելով, առանձին հողատարութեան է ար-
ժանացած: Գիւղատնտեսական մեքենաները այն
առաւելութիւնն ունեն, որ նրանք յարմարեցրած
են տեղական հանդամանքներին: Երկրից հարթ և
քարերից ազատ լինելով, բաւական հեշտացնում է
մեքենաների գործածութիւնը, կալուածատէրերը
ոչ մի ջանք չեն լինայում երկրի մշակելու և
դրա համար աշխատում են ընտիր մեքենաներ
ձեռք բերել:

Կենդանիները բաժնում ուշադրութեան
արժանի են Անդեր ցեղի կաթնատու կովերը,
մեծ մեծ, կատարեալ մեր գոմէշներին հաւասար
մասցու կզները. ձիերը շատ փոքր են, նրանց ա-
րած ապաւորութիւնը լաւ չէ. ուրիշ բան են խո-
զերը՝ ահապէս մեծութեամբ, մալ չաղութիւնից
մաղբը թափվում են: Ինչպէս յայտնի է դրանց
մօր գործածութիւնը հիւսիսում շատ մեծ է: Չու-
լտնի ամենասիրելի կերակուրը խոզի միսն է:
Փետրեղներից միայն հաւերն էին ուղարկել ի-
րանց ընտիր, հնդու-հաւերի մեծութեան ունեցող
ներկայացուցիչները, որոնց զոյգը 15 բուրլի էր
գնահատված:

Ահա ձեզ ցուցահանդիսում ներկայացրած իրե-
րի համառօտ անուանարկութիւնը. ընդհանրապէս
ցուցահանդէսը աչքի է ընկնում ոչ այնքան քանա-
կութեամբ, որքան արժանաւորութեամբ: Դուք
այդտեղ չէք գտնի հացահատիկների, պտուղների,
կանաչեղէնների նոյն իսկ կնիւղներին: Եւ
այն պայմանականութեամբ, ընկնում են, որ ճշմարիտ
մարդկային խելքը ընտելեան հետ կուսելով, նրա
արտադրութիւնը ըստ կարելոյն կատարելագոր-
ծել է: Ասածիս իրը գեղեցիկ ապացոյց կարող
են ծառայել այն ընտիր հացահատիկները, որ
հանդէս են դրված գրաֆ Բերդի կալուածներից և
որոնց համար պարունը այս տարի Պարիզի ցու-
ցահանդիսից օսկեայ մեդալ է ստացել: Մենք
բազմ ունեցանք լսելու պարունի բացատրութիւնը,
թէ ինչ միջոցներով է հասել նա այդ արդիւնքին:
Այդտեղ նա դրած ունէր մի շատ դժուար կշեռք,
որը ցորենի հատիկների մէջ ընտրում է առող-

ղու հիմա ուղում ես որ սիրտդ այնպէս թըմի-
թմիայ, ինչպէս որ իմ է թմիկիմիում...

— Ուղում եմ, հա, ուղում եմ: Կնիւղն էլ ինչ
բան է, որ այդ էլ չանէ: Մեռած է, սառած, իմ
սիրտը էլ աւելի սառնում է: Տնարար եմ, ա-
սում է, մատներս օսկի են, շինել, պահել դիտեմ:
Եւ, այդ շատ լաւ. բայց ինչ համար էլ արան,
այնպէս շարժվիր, այնպէս խոսիր, որ ես էլ պար-
գամ: Մի օր, երկու օր իմացածովդ բաւականա-
ցանք, հիմա էլ պիտի ջոկ ջոկ բաներ անես,
կնիկ ես ասիւ:

— Տունդ քանդվի, Վարդապար, իսկ որ քեզ
հետ այդ մասին չէ կարելի խօսել. դու ինչիւր ես
տեսել քո կանանդում: Հիմա խեղճացել ես, այդ-
տեղ կուչ եկել, մեծ կրակ պիտի լինի, որ քեզ
տաքացնէ:

Մի այս տեսակ խոսակցութիւնից յետոյ Վար-
դապար խիստ արդիւնք Սալբու կամ նրա մի ու-
րիշ բարեկամի իր տունը գալիս: Գալիս էր, ա-
սեց, մտնում, դուրս գալիս, կնիւղս սիրտը ձեզ
վրայ է մնում, ինձ չէ ուղում: Թողէք մենակ ինձ
տեսնէ, ինձ խնայի:

Սալբին իր ամբողջ կարողութեամբ սկսեց հա-
կառակել այդ մտքին, հաստատել որ այդպէս մը-
տածելը մեծ յիմարտութիւն է, մարդութիւն չէ,
բայց Վարդապար էր ասածին մնաց և մի քանի
անգամ այնպիսի խոսակցութիւններ արաւ իր գո-
քանչին, այնպիսի աղաղակ բարձրացրեց, որ Սա-
լբին իր հարկադրված էր լալով խնդրել մօրը. որ

Ջագոյնները և ծանրագոյնները: Նա այդ տեսակ ընտրած հատիկները ցանում է առանձին, պարար- զացրած հողում: Առաջածի հետ նոյն փորձն է կրել- նում ինքն ինչպէս, ասեց, արդէն վեցերորդ տա- րին է: Այդպիսով նա ստացել է ցորենի, հաճա- րի, պարու և այլ բերքերի ընտիր տեսակը: Յու- ցահանդէսը ահագին ներդրածութիւն է անում գիւղական դասակարգի վրա: Պատմում են թէ ինչպէս ցուցահանդիսի առաջին տարիները Չուխոն գիւղացին, որը միշտ կասկածով և արհամարանքով է նայում զէպի դերմանայի ազ- նուականը, չէր ուղում իր գիւղեցիկ ձին, կամ կովը ցուցահանդէսն ուղարկելու, իսկ այժմ նա այնքան ուրախութեամբ է յաճախում ցուցահան- դիսին, ինչքան սովորական գիւղական տնտաւա- ճառներին:

Համեստ համալսարանական Գորպատը արտա- ստիւր կերպով կենդանացել էր: Նրա նեղ, հնա- դարեան փողոցները լցվել էին ամեն դասակարգի խուռն բազմութեամբ: Ահա ուրախ դուարթ ու- սանողը, որի անհոգ ինքնազոհ հայեցողաձեւը, հանդարտ քայլուածքը, նրա ամբողջ երևոյթը, բո- լորը ապացուցանում է, կարծես, որ նա հասկանում է, որ ինքը այդ քաղաքի անբաժան անդամն է, որ նա Գորպատի աղատ ուսանողն է: Այս անց- նում է գերմանացի աղետակալ հաղթած վերջին մեղային համապատասխան հազուստով: Բայց ծո- դողով մեծ մասը կազմում է չուխոն գիւղացին: Մոնղոլների ծագումնից լինելով, նրա երևույթը զմադ- րութիւնը շատ անգիւ է, դարեւ ճորտութիւնը, կլիմայական այլ և այլ հանգամանքները նրա դը- ծերին մի տեսակ բուժ և մեղեկային արտայայտու- թիւն են տուել: Սարսափելի սառնարիւն, ծանրա- քայլ, բայց կրթութեան բաւական ընդունակ ժողո- վուրդ է: Նրանցից շատերը բոլորովին գերմանա- ցիկ են և դժուար է նրանց որոշել արտաքինս: Այդ մեծ դժգոյթութիւնը հաւաքել էր հանդիսա- տես լինելու ազատ հրէշներին մարմնամարդական փորձերին, լալտ կլուրի չմիայն գետի վրա տե- ղի ունեցող մրցմանը, որը ցուցահանդիսի մի տե- սակ առաջարկան է կազմում: Այստեղ գիւղացին տեսնելով ամենախառնադրութեամբ մեղեկաների փորձերը, նրանց ներկայացրած ահալին հեղու- թիւնները, համոզվում է նրանց գերազանցութեան մէջ և աշխատում անպատճառ ձեռք բերել, իսկ

Փ.

նա այլ ևս իր մօտ չը դաշ: Սալթին էլ վախճել խայտառակիւնը, արտին քար սեղմելով կատա- րեց փնտայի այդ պահանջը: Սալթինից բոլորո- վին մենակ էր, միայն Վարդապարին էր տե- նում, լուռութեամբ կատարում էր նրա պահանջնե- րը, մի խօսքով անդամ չէր ընդդիմանում: Բայց միշտ լաց և քաց... Մօր տուած խորհուրդը, շատ լուռ չը դնելը: Մի սոր շարժելու պէս ան- հնարին բան էր երևում:

Մի երկուր Վարդապարը յանկարծ տեսաւ պա- տից կախ արած կարապետին լուսանկարը, վեր- ցրեց, փրեց և չլրտեղով ասեց. Կորան էլ մի տեսնել, կորցրած: Ամբողջ գիւղը Սալթինից արտասուեց էր թափում. իսկ առաւօտը Վարդա- քարը սովորական ժամանակից շատ վաղ էր խա- նութ գնում, սովորականից շատ դեղնած էր, շուտ շուտ զգվանքով թրում էր:

Իր արածն ու Սալթինի լուռ արտասովոր զգուշ զգուշ էր հեռանում նրա մօտից: Նա եր- րանին փռվածում էր իր արարմունքից, բայց երբ տեսնում էր իրան արդէն ձերբութեան հասած սառած մարդ, և յիշում էր իր ջանք և դեռ նոր ձեռք ու ծաղիկը կնոջը, սիրտը սեղմվում էր մի անանուն, բայց ծանր զգացմունքի տակ: Աշ- լարձը դայթակղեցնող է, այնքան վախճած է, որ հարազատ եղբորն էլ չէ կարելի հաւատալ: Նրա մէջ վաղուց բուն էր դրել մի սարսափելի կասկած, կասկած կնոջ անհաւատարմութեան մասին: Այդ գիւղեցիկ երկտասարները, որոնք ան- բան ու անշուք թափառում են փողոցներում,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեղ խնդրում են տպագրել հետեւեալը: «Այժմ համարեա հաստատվում են երկար ժամանակից ի վեր թիֆլիսի բնակիչներին մէջ շրջող և մեծ տրտունջ յարուցանող այն լուրերը, որ քաղաքա- յին վարչութիւնը մտադրութիւն ունի թիֆլիսի բնակիչներին վրա բնակարաններին նոր հարկ դնել, և մինչև անգամ այս օրերս տեղական լուս- դիրները հաղորդեցին, որ քաղաքային Կոմսայի- ձայնաւորներից մէկը գիտատեղութիւն ունի շու- րտով դուրսի մէջ մի զեկուցում անել, որի հի- ման վրա հաստատվին բնակարաններին նոր հար- կեր և այդ միջոցով բնակիչներին ստացվող փո- դերը դործ դնելն բացառապէս քաղաքը կարգին լուստարելու, փողոցները քարելու և քաղաքում առողջապահական միջոցներ ձեռք առնելու վրա: Այդ հարկերը, մօտաւորապէս, պէտք է լինեն հետեւեալ կերպով: Ամեն մի բնակարան վարձողը պէտք է իր վարձած բնակարանի համար քաղա- քային վարչութիւնից որոշված տուրքը վճարէ, նայելով թէ քանի սենեակներից բաղկացած բնա- կարանի մէջ է ապրում նա, ինչքան փող է վճարում ամսական նա բնակարանատիրոջ և քանի առջամիտ են բնակվում բնակարանի մէջ: Բնակարան վարձողը ինչքան շատ փող լինի վճարում բնակարանատիրոջ, այնքան էլ շատ պիտի հարկ վճարէ քաղաքային վարչութեան, բայց դրանից, նայելով թէ քանի հողի են բնակ- վում մի բնակարանում, ամեն հողու վրա պէտք է որոշված հարկը վճարէ, և ի հարկէ, մի և նոյն ձևով այդ հարկի մէջ պէտք է մտնեն և տանտե- րերը, միայն վերջիններս բուն բնակարաններ- րի դիրք պէտք է որոշէ քաղաքային վարչութիւ- նը: Թիֆլիսի բնակիչները առանց այն էլ ծան- րաբեռնված են բաղմամբիւ հարկերով, այժմ էլ պէտք է նոր հարկ վճարեն քաղաքի լուստարու- թեան, փողոցները քարելու և առողջական մի- ջոցներ ձեռք առնելու համար: Ինչ տեղից պէտք է այդ տուրքը վճարէ այն թշուառ ընտա- նիքը, որը տարվայ շատ մասը քաղաքում է ապրում ամբողջ լուսնալու հետ ամբողջ մարմնով դողում է բնակարանի վարձը տանտիրոջ վճարելու հա- մար, փող չունենալու պատճառով. ինչտեղից պէտք է այդ հարկը վճարէ այն բաղմամբիւ գա- րը կերակրում է հարեաններից ստացած կերա- կութներով. ինչտեղից պէտք է վճարէ այդ տու- րքը այն անդործ արհեստաւորը, որը երևուր ա- ծիլելու համար հինգ կօպէկ չը գտնելու պատ- ճառով մօրուք է թողնում, ինչտեղից պէտք է այդ տուրքը վճարէ այն պանդուխտ և ընտա- նիքից ու դաւաններից հեռացած թշուառ մշա- կը, որը իր օրական մի քանի քիօց գէն օժած աղբի համար ստացած փողով հողի իրան է չոր հացով կառարարում: վերջապէս ինչտեղից պէտք է այդ տուրքը վճարէ այն անգործ կին տօն, որը արքունի հարկը վճարելու համար փող չու-

երգում են, ծախ տալիս, որա ու նրա պատու- հանին մոտիկ տալիս, այդպիսի երկտասարները ինչ են անում... Վարդապարի սիրտը արկնում լցվում էր, երբ մտաբերում էր որ Սալթինից կարող են խաբել, դրանք: Կնոջ սառնութիւնը նա մասամբ էլ այս հանդամանքին էր վերա- դրում: Եւ խտտութիւնը, պահանջը, որ կինը մի- այն իրան տեսնէ, աւելի ևս բարձրանում էր նրա աչքի առջև իբրեւ միակ փրկարար միջոց: Եւ ինչպէս ևս հարկաւոր, դուռում էր նա Սալթե- նիկի ճակատին, — կը գտաւ, մի վախիւր, կը գտաւ, ինքը իմ ոտս կը դաւա: Լոյս աշխարհից էլ կը զրկեմ ընդ. այս երկու պատահանները, որ փողոցի վրա են, ծածկել պիտի տամ. աչքը քիչ փողոցին զը- ցիր, ջուրտ աչքը կը հանեմ: Քիչը ինչ, որ աշ- խարհումս շատ ջանքի, գեղեցիկ տղերք կան... Աստուած քիչ ինչ է տուել, ինչ...»:

Սալթինից էր պատասխանում, լուռ էր միշտ:

Զ.

Մենակ ամենից հեռացրած Սալթինից օրեր էր միջնացնում տան պատերի մէջ: Նա ճարել էր իր համար մի փողը ու նեղիկ աշխարհ և ապ- րում էր նրա մանր գործերով, զբաղվում էր նրա պարզ, անպաճառ շահերով: Այդ աշխարհը տունն էր, անտեսութիւնը: Առաւօտը բացվելուց մինչև ճորտները վառելը նա շարժութեան մէջ էր լինում, հաւաքում էր, օրրում, մաքրում, պատ- րաստում էր կերակուր, բարձրում ու վերական- րել թափ էր տալիս, քանդում էր հիններ, բուրդը զգգգում, — լուսնում, նորից կարում: Նա կապված

նենալու պատճառով ցերեկները վախում է փո- ղոց դուրս գալ, իսկ գիշերները ձեռնարկում վառարար միջոցներին, քաղցամահից աղատվի- լու համար: Ահա հարցեր, որոնց մասին պէտք է մտածել նախ, քան նոր հարկերի խնդիր յարու- ցանկը...»:

Նորբերում «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» ռուսաց լրա- գրում մի տեղեկութիւն էր տպված, իբր թէ Նուխո անտառապետ պ. Եպիսկոպոսեանի ան- տառապահները, զմոտութիւն ունեցած լինելով Նուխո գաւառապետի հետ, թէ այդ պահապան- ները և թէ ինքն անտառապետը դատի են են- թարկված: Այժմ մեր Նուխո թղթակիցը հա- ղորդում է մեզ հաւատարի աղբիւրներից, որ «HO- БОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրին հաղորդած լուրը հիմ- նովին սուտ է:

Մենք լուր ենք, որ Կովկասեան ցուցահանդէ- սի բացման առաջին երեք օրերը բաւական խո- չոր եկամուտ են տուել ցուցահանդէսին, չը նա- յելով որ մուտքը այդ օրերում 1 ռուբլի արժէր: Այդպէս, օրինակ, առաջին և երկրորդ օրը ցու- ցահանդէսի եկամուտը եղել է 500 — ական բուրլի, իսկ երրորդ օրը 760 ռուբլի:

Հարկաւոր ենք համարում հաղորդել ընթերցող- ներին, որ երկնային Կովկասեան ցուցահանդէ- սում մուտքի դիւ կէսն են վճարում

Երկուշաբթի Բանկի թատրոնում ներկայացվից Ջուպիէի «Բոլաշի» օպերան, որի մէջ առաջին անգամ խաղում էր տ. Միլիտանա Տիկինը ունի լուս բեմական դէմք, դուրեկան և մշակված լիւր- կական սօսքանոս. միայն խաղում է մի փոքր անխտան կերպով. այնու ամենայնիւ նա աջո- դութիւն ունէր: Նոյն աշդութիւնն ունէր և տ. Բատմիբովա Պ. Բիլգի երեց մեծ թափ կուպ- լետները Թիֆլիսի առօրեայ հարցերի վերաբեր- ւած, որոնց մէջ ց ու լ ա ճ ա ն ի ղ է ս ը վերջին տեղը չէր բռնում:

Պետական կառավարչների միմիստ պ. Օստրով- սկի եկել է Կովկաս, և այս օրերս հիւր էր Թիֆ- լիսում: Սեպտեմբերի 18-ին մինիստրը այցելեց Կիլի չերամատուր, և այգեգործական դպրոցն ու այգին: Պ. մինիստրը յաջորդ օրը գնաց Բոր- ժօմ. նա մտադրութիւն ունի այցելել Անդրկով- կասի մի քանի նահանգներ:

Կովկասեան կառավարչապետը ուղարկել է ռո- լոր նահանգապետներին չրջաբերականներ, որոն- ցով կարգադրում է դադարեցնել արտասահմա- նեան անցադիր աղը Պարսկաստան և Թիւր- քիա գնացող ուխտաւորներին, ի նկատի ունե- նալով, որ այդ գնացողները կարող են իրանց հետ Արաբիայից և Միջագետքից տարափոխիկ

էր այդ փողոցի աշխարհի հետ, կապված էր մի տաք սիրով: Վարդապարի տուն բերած ամեն մի իրը նրան շատ ուրախացնում էր, նա ինքն էլ աշխատում էր մի բան աւելացնել, եղածը դե- ղեցկացնել: Տնային տնտեսութիւնն էր, որ մի կապ էր պահում երկու ամուսինների մէջ, տնա- յին տնտեսութիւնը Վարդապարի կոչութիւննե- րին, ամենօրեայ աղաղակներին, զանգատներին, որին կապում էին երկու ամուսինները. լուռ ու մունջ, միմեանց հետ անխոս, նրանք երկուսն էլ աշխատում էին այդ չէղը կողմի համար:

Մի աշնանային օր Սալթինիկին շատ ուրախա- ցրեց մի պուրջ թափով, որ Վարդապարը ու- ղարկել էր և պատուիրել որ լուս հալէ, զգուշ լի- նի, մի կաթիլ էլ չը փչայնէ: Սալթինից իւղը գրել էր բախում չինած թոնդրատանը, ուր պիտի հալէր: Մեծ կաթեան ու կրակը պատրաստուեց յետոյ, նա մտաւ սենեակի գոցնոցը վարցնելու հա- մար: Սենեակում մի ինչ որ գործ գրադեցնեց նրան այնպէս, որ մի ժամից աւել ուշանալուց յետոյ յանկարծ յիշեց, որ իւղը մնացել է, գոգ- նոցը խտտեց ու վաղեց դէպի թոնդրատունը:

Եւ իմով մտնելիս նրա աչքի լայն կանաչեց, նա մի անգամ վաչա կանաչեց և չըբեց թուլացած: Իրտաւ: Կարծես մի անգղին ծանրութիւն յան- կարծ ընկաւ նրա գլխին. մի ինչ որ անտեսանե- լի տաք ջուր վաշցա նրա ականջներում: Մի րօպ էլ կար որ նա տեսնում էր այդ անաղանդութիւ-

հիւանդութիւններ բերել: Ինչպէս յայտնի է լուր կայ, որ այդ տեղերում խօշրտա կայ, որ անցել է նոյն իսկ Պարսկաստանի մի քանի կողմերը:

Ներքալթի, սեպտեմբերի 19-ին վրաց թատ- րոնական մշտական խումբը անհեղ իր դոյու- թեան տանամանկը: Առաւօտեան Կալիէի ե- կեղեցում հոգեհանգիստ կատարվից վրաց բեմի համար մեծած աշխատողների համար: Երեկո- յեան հանդիսաւոր ներկայացում կար Բանիլի թատրոնում: Թատրոնի ֆուայէները, դարդարված էին ծաղիկներով և պատերից կախված էին Թա- մար թագուհու, Բուսթամիւլիի և վրաց թատրո- նի թէ մուսած և թէ կենդանի դրամատուրգների և դերասանների պատկերները: Ներկայացման սկզբին երաժշտական խումբը նուագեց ռուսաց աղջկային հիմնը. երբ վարագոյրը բարձրացաւ, ծաղիկներով և պատկերներով զարդարված բե- մի վրա շարված էր ամբողջ խումբը, որի ամեն մի անդամ ձեռքին բռնած ունէր մի պսակ: Պ. Երեստով կարգաց հանդիսին համապատաս- խան մի ոտանաւոր, պ. Գուլաձէ կարգաց վրաց թատրոնի պատմութիւնը, պ. Աբաշի- ձէ կարգաց վրաց թատրոնի նշանակութեան մասին: Այդ կարգացվեց մի ուղերձ վրաց մէջ «Գրագիտութիւն տարածող» ընկերութեան կողմից և մի քանի հեռագիրներ: Վերջը պ. Ե- ռեստով դառնալով դէպի բեմի վրա դրած վրաց թատրոնի հիմնող Գեորգ Երեստովի պատկերը, ոտանաւոր ասեց, որից յետոյ դերասանները ի- րանց ձեռքերին բռնած պսակները դրեցին պատ- կերի վրա և հանդէսը վերջացաւ: Այնուհետև ըս- կովից ներկայացումը, որ բաղկացած էր զանա- զան պիէսաների կողմերից:

Վերջին ժամանակներս քաղաքը սկսել է սաստ- կանալ Թիֆլիսի մի քանի թաղերում, վարակիչ կերպարանք ստանալով: Միջին քաղաքային վար- չութիւնը պիտի անցնալ տարվայ պէս անհոգ մնայ և ոչինչ նախապաշտպանողական միջոցներ գործ դնելու չէ հիւանդութեան տարածման ա- րաջն առնելու համար: Նոր նշանակված սա- նիտար կառն բոխն էլ մի և նոյն ժամանակ ձիաքաշ երկաթուղու ծառայողների բժշկի պաշ- տօնը կատարելով, մինչև այժմս զբաղված է քա- ղաքի առողջութեան հետ կապ չունեցող գործե- րով, և պահանջել նրանից մի որ և է գործու- նելութիւն քաղաքի առողջապահական հարցերի վերաբերմամբ: Դժուար է և մինչև անգամ անկա- րելի: Առանց այն էլ մի բժիշկին անգամ կը զը- ժուարանար հարկեր հաղար բնակիչ ունեցող քա- ղաքի ամենապատրաստական պահանջողներին մասին հողալ, ուր մնաց այժմեան բժշկից բան պահանջել:

Թիւրքաց Հայաստանից չը տեսնված հիււրեր են զալիս մեղ մօտ: Այս օրերս մեր խաղաղա-

նը և աներեղութեամբ ջուրը արդէն մի քանի ան- ցում պտտվում էր նրա մէջ, զլիւրց դէպի սիրտը և սրտից դէպի զուլմը: Նա իր բոլորոված աչքե- րը դէս ու դէն չըբեց, յուսահատ օրոնում էր իւղ և իւղ. անթիւ անգամ նայեց դատարկ ամանին, նայեց նրա տակին, դէս ու դէն ընկաւ և մէկ էլ դուրս Թուա թոնդրատունից: Այդ ժամանակ մի- այն տեսաւ իրանց հարեանի մեծ շանը, որ պա- տի տակ կանգնած, նայում էր զկալ թոնդրատու- նը և լպստում էր իր դունչը: Մի ակնթարթում նա հասկացաւ թէ ու էր այդ թշուառութեան պատճառը, դարացած գնաց դէպի շուրտ: Բայց սա այնպէս մեղաւոր իր միտք բերանը, այնպէս լսիտ ու սուր հաչեց և մի քանի քայլ դէպի ա- ռաջ եկաւ, որ Սալթինից յետ ու յետ մղկլով, լեղապատառ գետնի վրա տարածվեց սանդուղքի մօտ:

Մի քանի րօպէ անցած հարեան կնիկը նրան դուռը քաշ տալով տուն էր տանում: Ուշքը զը- լուրը զալում պէս Սալթինից ջերմի մէջ դողա- ցող մարդու պէս օկսից դողողով, կոտորալիւ, թէն հարեանի կնիկը երբորդ հաստ վերական էլ զցեց նրա վրա, բայց դողողոցը չէր վերջանում:

Սալթին լսեց, իսկոյն վաղեց իր աղջկայ տու- նը: Բայց ի դուր էր շտապում, ի դուր էր ձեռ- բերել կողքին խիտ. մինչև նրա հասնելը Սալթե- նիկը ծնել էր մի մեծած աղայ: Սուգն ընկաւ տունը, մի քանի անգամ ծննդկանը ունից զը- նաց, բարձր աղաղակներով ու գոռոցներով ուշը յետ դարձրին:

տուն մտաւ մի պառաւ, գոցի 60 տարեկանից աւելի կին, որի պատմութիւնը երևում է հետեւեալը: Նա արարելիքն է, մի ոմն հաջի Նիլայի կին, Նա անտունի: Այդ Նա մի գիշեր երազում տեսնում է, որ սուրբերը իրան պատուիրում են ուսումնարան շինել:—մեծ առաջադիմութիւն: պառաւ հայ կինը երազ է տեսնում ուսումնարան շինելու: Այդ օրից այդ կինը իրան նուիրում է իր տեսած երազի իրազդածման, վճռելով իր ծախսով և իր հաւաքած միջոցներով մի դպրոց շինել Արարիկի մօտիկ գիւղերից մէկում: Այդ նպատակով նա պտտում է թուրքաց Հայաստանի զանազան կողմերը, դնում է Կ. Պօլիս, և հաւաքում է փողեր, ուղարկելով այդ փողերը տեղական առաջնորդին՝ դպրոցի համար: Նրան յայտնում են, որ հաւաքած փողերը բաւական չեն, և ահա պառաւ կինը անցնում է Ռուսաստան, համոզված լինելով որ այստեղ մեծ աջակցութիւն կունենայ: Հանապազօրէն, ինչպէս ինքն է՝ պտտմամբ, կորցնում է իրան տուած կոնդակները և անցազրկւում: և այդ դրութեամբ թիֆլիս հասնելով ընկնում է ամենաողորմելի վիճակի մէջ: Ոչ տեղ ունի քնելու, ոչ փող ունի ձեռքում, և ոչ էլ դիտէ թէ ում պէտք է դիմել,— և այդ դրութեան մէջ, ինչպէս սովորաբար պատահում է,—նրա քայլերը ուղղել են տալիս դէպի «Մշակ» խումբ: օգնելու համար մի քանի միջոցներ ցոյց տուցին, և մեղ մնում է՝ դարձանալով անզամ շին պտաւ կնոջ այդ աստիճանի վճռակամութեան վրա՝ հրապարակ հասարակութեան ուշադրութիւնը թիրքաց Հայաստանից եկած այդ նոր տեսակ հիւրի վրա...

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են մեզ. «Գանձակ դաւառի գիւղացիների յոյսը առատ հունձ ունենալու մասին՝ չը պատկեր, այս տարի ցորենի հունձը, հակառակ փողովորի սպասածին, շատ պակաս էր, այնպէս, որ գիւղացին իր սերմածը հալու վերցրեց: Գիւղացին վերջին ճգնաժամի մէջ է. մի կողմից հնձի անաղորտութիւնը, միւս կողմից անասունների կտորուծածը բոլորովին յուսահատացրել են նրան: Անասունների հիւանդութիւնը քաղաքում էլ տարածված է»:

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են: «Այս տարի Գանձակում խաղողի բերքը զրեթէ չը կայ. բացառութիւն է կաղում այն այգեները, որը իր սովորական արդիւնքի կէտը գտնէ ստացել է: Բայց ուրախալին սա է, որ այս տարվայ գինիները անհամեմատ բարձր յատկութիւն ունեն անցեալ տարիներին: Այգեկները զրեթէ վերացած է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍԿ-ՆԱԽԱԳԱՀ ՏԻՐԱՐԻ ՃԱՌԸ

Նորերս, երբ անդի ունեցաւ այն շքեղ արձա-

Ներկայիս վարդապետը դուրս էլ չէկաւ իր սենեակից: Նա, կարծես, շատ հեռու կերպով էր հաշտվել եղած իրողութեան հետ և ոչինչ չէր ասում: Միայն մի անգամ, երբ հիւանդի մօտ նստած կանանցից մէկը նրա մօտ գնաց, որ հասկացնէ թէ լաւ բան չէ, որ նա չէ մահում, թէ իր կնիկն է, աչքը մնացել է չէմբին, մանրալիւս-ճառը չը դիմացաւ և կրակ կտրած աղաղակեց.

—Մի կնոջ ուշքն ու միտքը թէ փողոցում և միայն փողոցում լինի, տասն բուրլու իւղը, ի հարկէ, կը կորչի:

Եւ յետոյ լսեց, հանդարտվեց: Բայց նրա ձայնը հասաւ ծննդկանի սենեակը. լսեցին ամենքը, և ամենքը, բացի հիւանդից, իրանց ձեռքերը տարածեցին ու դէպի վեր նայելով՝ մրմնջացին. «Իմաք քեզ, Աստուած...»:

Ե.

Այն քանի օրից յետոյ թէ Նա Սաթենիկը ոտի վրա էր, բայց այդ ևս առաջվանը չէր: Սարսափելի արագութեամբ նա մաշկում էր, կորցնում էր իր գոյնը, չը նայած որ Սաթենիկը նրան ամեն մի վրան չափողի, զբոսիցի մօտ էր տարել, բազմաթիւ ծննդի և արարողութիւններ էր կատարել, անթիւ մօմեր էր վառել բոլոր յայտնի և անյայտ սրբերի անունին: Զաւը չէր հասկացվում, փողովորական բոլոր ուստանները չը գիտէին թէ ինչու իրանց տուած դեղերից մէկն էլ մազի օգնութիւն չէ անում: Բազաւային բժիշկը խորհուրդ տուեց չուտ-չուտ բաղանիքում լողանալ և զեղատում էլ չը գրեց: Սաթենիկ էլ բոլորովին

նի բացումը, որը կառուցել է Պարիզ քաղաքը ի պատիւ հանրապետութեան, մինիտր-նախագահ Տիրար մի ձառ. ասեց, որի մի քանի կէտերը աւելորդ չենք համարում առաջ բերել:

Հանրապետական կառավարութեան կողմից, ասեց Տիրար,—չորհակալութիւն ևս յայտնում Պարիզ քաղաքի ներկայացուցիչներին այն հիւանդի ընծայի համար, որը նրանք տալիս են Ֆրանսիային, կառուցանելով այս հսկայական արձանը:

«Այդ արձանը միանգամայն արժանի է Ֆրանսիային և հանրապետութեան: Նրա հանդիսաւոր բացումը բնականաբար միախառնվում է այն տոնակալութիւնների հետ, որոնք կատարվում են 1789 թվի հարիւրամեակի տարեդարձի առթիւ»:

«Տօնելով իրանց պատմութեան նշանաւոր տարեշրջանները, աղիքը արդարացնում են իրանց հայրենասիրական երախտագիտութիւնը: Կառուցանելով այնպիսի արձաններ, նման այն արձանին, որով մենք այժմ հիանում ենք, նրանք, այդ աղիքը յանձնում են ապագայ սերունդին նախադրելի փառք և այն աղիքը օրինակներ, որոնց պէտք է հետեւել և նմանվել:

«1789 թվի ձեռք բերածները բաց արին Ֆրանսիային և ամբողջ մարդկութեան համար նոր և լայն հորիզոններ: Պարիզ քաղաքը վճռեց թուլութիւնների յիշատակը մի արձանով, որը կառուցված է հրապարակները մէկի վրա... Փառք և պատիւ Պարիզին»:

Գրանից յետոյ ձառ. խօսեց մոնիցիպալիտետի խորհրդի նախագահը, որը զխաղաղապէս կանգ առաւ այն բարեքնիքի վրա, որ տուել է Ֆրանսիային հանրապետական կառավարութիւնը, յոյս յայտնելով, որ վերջին ժամանակներում տեղի ունեցած անհամակարգի երևոյթները վերջ կը ստանան: Այդ միտքը արժանացաւ բուռն ծափահարութիւնների:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական «Daily News» լրագիրը խորհուրդ է տալիս Անգլիային ունչապնել Կիպրոսի դաշնագիրը, որով Անգլիան պարտաւորվել է պաշտպանել Սուլթանի ասիական նահանգները ամեն տեսակ նուաճումների դէմ: Հակառակ դէպքում, այսինքն ի՞նչ Կիպրոսի դաշնագիրը պահպանվի, Անգլիան պարտաւորված կը լինի պատերազմ յայտնել ամեն մի պետութեան դէմ, որը կողմնակի մտնել թուրքաց Հայաստան և առհասարակ Ասիական թուրքերէ «Daily News» կարծում է, որ Ռուսաստանը և Անգլիան կարող կը լինէին փոխադարձ համաձայնութեամբ կարգադրել թուրքերի ասիական նահանգների խնդրերը:

—Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ Բ. Գուռը մի նոր դեսպան է նշանակել Հնդկաստան:

Կուչ էր եկել, մաշկը և յաճախ ասում էր թէ իր բանը պրծել է, մի մաշ է մնացել, այդ մաշն էլ որ կտրվի, ինքը գերեզմանում կը լինի:

Զաւը, վերջապէս, յայտնեց իր անունը: Մի գիշեր փողոցով մի հարսանիք էր անցնում: Զուռնայի ձայնը Սաթենիկին, ինչպէս ասում են, դժուարացրեց: Նա ամբողջապէս ոտից մինչև գլուխ սկսեց զոռոզողալ. մի սարսափելի թուլութիւն կսկծում էր բոլոր անդամները, իսկ սրտում նրա տած մի խիտ ջերմութիւնը մղում էր նրան դէպի փողոց, դէպի այդ դուռնան: Զաւը աւելի ևս ստատկացաւ, այդ գիշեր նա համարեա մահած էր:

—Պաղագաւ է, իսպաղաւ, հաստատեց ամեն մի մարդ, որ լսեց այդ դէպքը: Եւ երբ մի քանի ամսից յետոյ մարտը իկաւ, ընտելեան մէջ ամեն կենդանի սկսեց տաքանալ, նորոգվող կենանք սկսեց շարվել,—բերին գուռնաչիներին, նստա-ցրին: Սաթենիկը սկսեց պարել:

Առաջին օրն էր: Սաթենիկը սենեակի շէմքի մօտ կուչ եկած, ծալված, փրքաքած նստած էր և կարծեմ աչքերով տեսնում էր թէ ինչպէս են պարաճում Սաթենիկին, ինչպէս է գիւղացի երիտասարդը փչում, կոտորատում նրան, բայց նա ամենին չէր դուռ ոչ ցաւ, ոչ յոգնածութիւն: Այդ մի անտանելի ցաւ էր, որ հաղարից, տասն հաղարից մէկի մէջն է բնակվում: Խեղճ մայրը այժմ էր պտղը հասկանում, որ իր որդու ցաւը զարդը այդպիսի բացառիկ է և սկսեց աւելի բարձր ձայնով ողբալ:

Կեսպանը աղղութեամբ հայ է, վաճան է քէն-դին: Կրանով, ինչպէս կարծում են լրագիրները, թուրքերն ուղում է ցոյց տալ խաղալին, որ ամենին չէ հալածում հայերին:

—Եւրոպական մամուլը ընդհանրապէս այն կարծիքի է, որ ֆրանսիական վերջին ընտրութիւնների ժամանակ Բուլանմէի կուսակցութիւնը կատարեալ պարտութիւն կրեց: Կիպրոսի անկախ շրջաններում այն համոզմունքն է տիրում, որ այդ ընտրութիւնները աւելի ամրապնդեցին կառավարութեան դրութիւնը:

—Լոնդոնում այս օրերս ակցիաներ դուրս թողնելի պարսկական պետական բանկ հիմնելու համար թէհրանում: Աշողութիւնը սպասածից շատ աւելի էր:

—Մի քանի ժամանակ առաջ լուր տարածվեց, որ խաղալիսի գլխաւորական և ծովային մինիստրները առաջարկել են լրացուցիչ փոխառութիւն անել աւելի քան 40 միլիոն: Այժմ Հնդկ միջ հեռագրում են, որ այդ լուրերը ճիշդ չեն:

—Վիեննայից հեռագրում են, որ կառավարութիւնը փակել տալով գերմանական աղաղակ կուրը, զեկավարվել է այն կարծիքով, որ այդ կուրում արժարժվում են ապստամբական մշտ-քեր:

—Եւրոպական մի քանի պետութիւններ արդէն դործածութեան մէջ մտցրին այն վառօդը, որը ծուխ չէ հանում և որը մեծ առաւելութիւններ ունի միւս տեսակի վառօդից:

—Լուր կայ, որ Բուլղարիայի և Սերբիայի յաւաքերով լինները կրկին լարված կերպարանք են ստանում:

—Լրագիրները հաղորդում են, որ Շաբիր-իւ-Հան ձերբակալելով Կրիտէ կղզու ապստամբութեան գլխաւորները մի քանիսներին, ուղարկեց Նրանց Կ. Պօլիս, որտեղ նրանք այժմ բանտարկված են ոտակալութեան կենտրոնական բանտի մէջ:

—Եւրոպական լրագիրները հաստատում են որ Պարսկաստանի Բուշիր քաղաքում երևացել է լոյսերան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են, որ Պարիզի համալսարանային ցուցահանդէսի այցելողների թիւը, ցուցահանդէսի բացման օրից սկսած մինչև այսօր՝ եղել է մօտ 18 միլիոն հոգի:

Վիեննայում հրատարակվող մի ամսագրում տպագրված է Հնդկաստանի առևտրի ուսումնարանի վերնադրով մի յօդուած, որից երևում է, որ կենտրոնական Աֆրիկայում մի այժմով կարելի է մի ճորտ կին գնել, իսկ 5 կամ 6 տարեկան երեխան գնվում է շատ ցնչին քանադակութեան աղաղակ: Երեխաները և աղջիկները ենթարկվում են սարսափելի տանջանքների:

Եվրոպայում այս օրերս մի տարօրինակ դործ

Ծանկարծ քամանչայի ու փողի ձայնը կտրվեց հիւանդի հրամանով:

—Մայր, ասեց Սաթենիկը ընդհատվող ձայնով, կարծես մի շնչում ահաղին տարածութիւն էր անցել.—մայր, մի սուգ ասա, մի լաւ սուգ... Մօտեցիր, ինձ մօտ նստիւ:

Սաթենիկը յայտնի էր ինչպէս լաւ սուգ կանչող: Նրան տանում էին մեծամեծների տները, որ լաւ, շնորհով լացացնէ սպառնալիքներ: Այժմ նրա սիրտն էլ հէց դուռ էր սղալու պահանջ և նա լաւ կայն սկսեց ամենատխուր, սիրտ կտրատող, անտանելի սուգով: Հիւանդը նստած էր ճրարի և իր մօր դիմաց, փայտաքածի պէս գլուխը վերցնած՝ լուռ էր: Միջ յուսահատական երեւոյթները նրա ամբողջ կաղմուածքի վրա միայն յոյնքերն էին հաղել: Նկատելի կերպով շարժում և երբեմն բոլորովին բաց և հերարձակ գլուխն էլ մեղմ և խիտ կերպով օրորվում էր: Պաշտած աչքերից յուսահատ դանդաղիւսութեամբ դուրս էին գը-լորվում արտասուքներ խոշոր ու ծանր կաթիլներ: Երբեք քարի գնդակներով պէս արած ընկնում էին նրա դոգը՝ մի հնար անգամ չը թողնելով ոտ-կորացած, չորացած արտաքին վրա: Լաց էին լի-նում ամենքը: Մինչև անգամ նուազածուներն էլ զգացված խոր հառաչում էին:

Այդ միջոցին ներս մտաւ վարդապետը: Նա բռնել էր թաշկինակը աչքերի վրա և լաց էր լի-նում հեկեկալով: Նրան տեսնելու պէս Սաթենիկը մեծ ոյժ դործ գնելով, տեղից քիչ բարձրացաւ և ջուխտ թիկը, առաջ մեկնելով, իր ամ-

էր քննվում դատարանի մէջ: Մի ուսանող դան-գառ էր տուել մի բժշկի դէմ, մեղադրելով բժշկ-կին, որ նա, հակառակ իր կամքի, հիւանդ տի-գ-մի ենթարկելով իրան, ուսանողին, պատճառել է անտանելի բարոյական վշտեր և ֆիզիկական տանջանքներ: Դատարանը ոչ մի վճիռ չը կարո-ղացաւ կայացնել, որովհետեւ բանից երևաց, որ մեղադրվող բժիշկը այնպիսի վիճակ էր դուրս բերել, որոնք հիպոստիզիա աղղեցութեան շնոր-հով՝ ուսանողի հակառակ ցուցմունքներ էին տա-լիս:

Յայտնի է որ Պարիզում 3 միլիոն մշտական բնակիչ կայ: Այժմ, ինչպէս հաղորդում են լրա-գիրները, համալսարանային ցուցահանդէսի ժամա-նակ, բնակիչների այդ թիւի վրա դարձնալ աւե-լացել են 1 միլիոն եկտրներ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՐՈՒՐԻ, 18 սեպտեմբերի: Պետական և-կամուտներ յայ տարվայ առաջին կիսամեակի վերաբերեալ հրատարակված տեղեկութիւններից երևում է, որ եկամուտն է 412,492,000 ֆրանկ, մինչդեռ անցեալ տարի նոյն ժամանակամիջո-ցում եղել է 374,869,000 ֆրանկ:

ԲԷԼԳԻԱ, 18 սեպտեմբերի: Նատալիա թա-ղուհին այստեղ հասաւ կէսօրից յետոյ ժամը 4-ին. նրան բուռն կերպով ողջունեց ժողովրդի ահա-ղին բաղմութիւն, որը ուղկկեց նորին մեծու-թեանը մինչև Վալենտին տունը, որտեղ նրա հա-մար պատրաստված էր քնակարան: Թագուհու այս-տեղ համակցեց յետոյ անմիջապէս նրան այցելեց ուսաց դեսպանը, իսկ մինիստրները իրանց այ-ցեւորները թողնեցին: Երեկոյան քաղաքը լուսա-ւորված էր:

ՊԱՐԻԶ, 18 սեպտեմբերի: Այսօր արդիւնաբե-րութեան շինութեան մէջ տեղի ունեցաւ այն պարզների բաժանումը, որոնց վճռված է տալ Պարիզի ցուցահանդէսի էկսպոնենտներին: Հա-ւաքված ահաղին բաղմութիւնը ողջունեց հանրա-պետութեան նախագահին ուրախութեամբ աղա-ղակներով: Մինիտր Տիրար հաղորդեց, որ էկս-պոնենտների թիւը 60,000-ից աւելի է, և որ քննող մասնագէտները վճռել են տալ ընդամե-նը 33,139 պարզ, որոնց թիւում և 903 բարձր պարզներ—«Grand Prix», 5153 սակեայ մի-դալներ, 9690 արծաթի և 9323 բրոնզի մեդալ-ներ, այլ և 8070 զօլասանական թիւթեր: Մի-նիտրը շնորհակալութիւն յայտնելով բոլոր էկ-սպոնենտներին, ասեց որ օտար հիւրերը Ֆրանսիայի մասին լաւ տպաւորութիւններ կը պահպանեն, և յայտնեց, որ Ֆրանսիան ուղում է հաշտ ապրել ամբողջ աշխարհի հետ, բայց ոչինչ չի դո՛ւր ի վրաս իր շահերի և իր պատիւի: Նախագահ Կար-նո նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց էկսպո-նենտներին և այն միտքը յայտնեց, որ 1889 թվի ցուցահանդէսը Ֆրանսիայում խաղաղութեան ձա-

բողջ հիւանդութեան հաւաքեց, ճանդ արեա-նրա երևալին և դողողալով գոցեց. «Առ...»:

Վարդապետը բոլորովին ծածկեց իր դիմքը թաշ-կինակի մէջ և աւելի բարձր հեկեկալեց իր ար-ձակութեան իսկ հիւանդ թուլացաւ այդ սարսափե-լի լարված և անհղից և ընկաւ բարձրի վրա:

Ասում էին թէ մանրալիւսաւոր սիրտն էլ շատ բարակել էր և նա ամեն երեկոյ լաց էր լինում մենակ իր սենեակում: Ի՞նչ էր նշանակում այդ լացը.—ոչ որ չէր հարցնում, չէր իմանում ինա-մի Վաղարն անգամ հեռացել էր նրանից, որով-հետեւ, ինչպէս ինքն էր ասում, էլ հանաքի տեղը չէր: Նա մենակ նստում էր խանութում, սառած նայում էր անցողաբաժանողին և նրա բռն, անդալ-դէմի վրա ոչինչ մի միտք չէր կարգացվում: Եր-բեմն միայն նա ասում էր ինքն իրան, «աշխար-հի հետ դժուար է եղայ դնալը. ի՞նչ պիտի ա-նեմ ես ուղում եմ դրախտ, կտրվում է: Ել ձեռքում չորհրդ չէ մնացել...»:

Այդ խօսքերը սակայն, ոչ որ չէր լուռ. նա այդպէս էր ասում բոլորովին մենակ մնացած ժամանակը, անխա-մեղանարար էր ասում:

Վեց օր ու վեց գիշեր տեղի Սաթենիկի զե-րեղմանական պարը: Այդ պարը պիտի պարզէր Սաթենիկի համար.—արժէ տարել այս աշխար-հում, թէ ոչ...

